



## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

“ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ” ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2013 թվականի ծրագրի իրականացման համար ՀՀ 2013թ. պետական բյուջեից հատկացվել է **150,793,500 ՀՀ դրամ**:

Հաշվետու ժամանակահատվածում ՓՄՁ պետական աջակցության 2013 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին **տրամադրվել է 17243 աջակցություն**:

Տրամադրված աջակցության ուղղություն	2011թ.-ի ընթացքում տրամադրված աջակցության քանակ	2012թ.-ի ընթացքում տրամադրված աջակցության քանակ	2013թ.-ի ընթացքում տրամադրված աջակցության քանակ
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	3588	7398	15647
Ուսուցողական աջակցություն	-	515	521
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	95	209	462
Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում	28	150	243
ՁԵՅ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	69	191	243
Արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցություն	-	44	127
Տեղական տնտեսական զարգացման ծրագրում ընդգրկված համայնքների քանակ	-	5	19
Համայնքային նշանակության ենթակառուցվածքային ծրագրերի քանակ	-	5	4
Իրացված գյուղտեխնիկայի քանակ	-	-	230
<b>Ընդամենը</b>	<b>3780</b>	<b>8507</b>	<b>17243</b>

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 5.2%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 94.8%-ը ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրված աջակցության մարզային բաշխվածքը հետևյալն է. Արագածոտնի մարզում՝ 1361, Արարատի մարզում՝ 1529, Արմավիրի մարզում՝ 1489, Գեղարքունիքի մարզում՝ 1210, Լոռու մարզում՝ 1645, Կոտայքի մարզում՝ 2476, Շիրակի մարզում՝ 1489, Սյունիքի մարզում՝ 1376, Վայոց Ձորի մարզում՝ 2348, Տավուշի մարզում՝ 1525, Երևան քաղաքում՝ 795 (*Հավելված 1*):

2013թ. ինն ամիսների ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքներն ըստ առանձին ուղղությունների և աջակցության ծրագրերի ներկայացված են ստորև:

**1. ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի կառավարում, ամրապնդում և ընդլայնում**

2013 թվականի ընթացքում աշխատանքներ են իրականացվել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի բարձրացման, մարզային մասնաճյուղերի աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման ուղղությամբ:

ՓՄՁ պետական աջակցության ծրագրային ուղղություններով նախատեսված միջոցառումների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համագործակցություն է հաստատել նոր կազմակերպությունների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն” հիմնադրամի /ԱԳԶԿ/ հետ համագործակցության շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի և ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան և Բերդ քաղաքներում ստեղծվել են “Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն” հիմնադրամի ներկայացուցչություններ:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանք է իրականացվել նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ներքին կարողությունների զարգացման ուղղությամբ: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի աշխատակիցները մասնակցել են Հայաստանի Հանրապետությունում և արտերկրներում կազմակերպված մի շարք դասընթացների, համաժողովների և հանդիպումների:

***“Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին” 2013 թվականի ծրագրով*** ***“ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում, կառավարում և ընդլայնում” ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 150,793,500 ՀՀ դրամ:***

## 2. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն

Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել և ընթացքի մեջ է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» 25 ծրագիր<sup>1</sup> ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, Վարդենիս և Սևան, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր (2 ծրագիր) և Ալավերդի, ՀՀ Կոտայքի մարզ Հրազդան, ՀՀ Շիրակի մարզ Արթիկ (2 ծրագիր), ՀՀ Սյունիքի մարզ Մեղրի և Գորիս, ՀՀ Տավուշի մարզի Իջևան, Նոյեմբերյան և Բերդ, ՀՀ Արարատի մարզի Արտաշատ (2 ծրագիր), ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր (2 ծրագիր), ՀՀ Արագածոտնի մարզի Թալին, ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենի համայնքներում և Երևանում (5 ծրագիր): Ընդհանուր առմամբ նշված վայրերում ծրագրին մասնակցելու համար դիմել են 1015 սկսնակ գործարարներ, որոնցից ընտրվել են **462-ը** (*Հավելված 2.1*):

2013թ. իրականացված ծրագրերի մասնակիցներից հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է ստացել և ձեռնարկատիրական գործունեություն է ծավալել 198 սկսնակ գործարար, որից 128 սկսնակ գործարար պետական գրանցում է ստացել և ձեռնարկատիրական գործունեություն է ծավալել "Աջակցություն սկսնակ գործարարներին" ծրագրի մասնակցության արդյունքում (Հավելված 2.2): Պետական գրանցում ստացած և գործունեություն ծավալած սկսնակ գործարարների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է՝ արտադրության ոլորտում՝ 50.0%, ծառայությունների ոլորտում՝ 41.0%, առևտրի ոլորտում՝ 9.0%:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում (Լճաշեն և Չկալովկա) ծրագիրը գտնվում է դասընթացային փուլում և կավարտվի 2014 թվականին:

2013թ. ընթացքում սկսնակ գործարարների աջակցության ծրագրի շրջանակում նշանակալի աշխատանք է իրականացվել նաև գործարար սիրիահայերին օգնություն ցուցաբերելու ուղղությամբ.

---

1 ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ և Տավուշի մարզի Իջևան քաղաքներում ծրագիրը իրականացվել է Գերմանիայի միջազգային համագործակցության կազմակերպության (GIZ) աջակցությամբ:

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան և Բերդ, Սյունիքի մարզի Մեղրի, Արարատի մարզի Արտաշատ և Արմավիրի մարզի Արմավիր քաղաքներում ծրագիրը իրականացվել է ՄԱԿ-ի "Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում" ՄԱԶԾ/Հայաստանի աջակցությամբ:

ՀՀ Արագածոտնի մարզի Թալին, Գեղարքունիքի մարզի Վարդենիս, Արմավիրի մարզի Արմավիր, Արարատի մարզի Արտաշատ, Լոռու մարզի Վանաձոր և Ալավերդի, Կոտայքի մարզի Հրազդան, Շիրակի մարզի Արթիկ, Սյունիքի մարզի Գորիս, Վայոց Ձորի մարզի Արենի քաղաքներում, ինչպես նաև Երևանում ծրագիրը իրականացվել է "Կանանց ձեռներեցության զարգացում" Ասիական զարգացման բանկի (ADB) աջակցությամբ:

Երևանում սիրիահայերի համար ծրագրերից 3-ը իրականացվել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ /ՄԱԿ ՓԳՀ/, իսկ 1-ը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ծրագրերի շրջանակներում:

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր, Շիրակի մարզի Արթիկ քաղաքներում ծրագիրը իրականացվել է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (UNIDO) աջակցությամբ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան (Լճաշեն և Չկալովկա) քաղաքում ծրագիրը իրականացվել է ԱՄՆ ՄԶԳ (USAID) հետ համատեղ «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակներում:

- հաշվի առնելով սիրիահայ գործարարների հետաքրքրվածությունը Հայաստանի ազատ տնտեսական գոտիներում գործունեություն ծավալելու վերաբերյալ՝ 2013 թվականի հունվարի 15-ին կազմակերպվել է հանդիպում “Մարս” ՓԲԸ-ի ղեկավարության հետ, որին մասնակցել են 17 սիրիահայ գործարարներ,
- փետրվարի 21-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվել է սեմինար ՀՀ մաքսային օրենսդրության վերաբերյալ, որին մասնակցել է 34 սիրիահայ գործարարներ,
- ապրիլի 18-ին, մայիսի 29-ին և նոյեմբերի 15-ին կազմակերպվել են սեմինարներ ՀՀ հարկային օրենսդրության վերաբերյալ, որին մասնակցել են 68 սիրիահայ գործարարներ,
- Հաշվետու ժամանակահատվածում 92 սիրիահայ գործարարների համար իրականացվել են «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» 4 ծրագրեր, որոնց արդյունքում ներկայացված լավագույն և իրատեսական 43 գործարար ծրագրերը հաստատվել և ֆինանսավորվել են,
- «Աջակցություն սիրիահայերին» ծրագրի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծված սիրիահայ գործարարների տվյալների շտեմարանում առկա տվյալները պարբերաբար լրացվում են և ներկայումս այդ ցանկում ներգրավված են մոտ 400 սիրիահայ գործարարներ: Միաժամանակ, պարբերաբար իրականացվում է նրանց կարիքների գնահատում, որի արդյունքում տրամադրվում է խորհրդատվական, տեղեկատվական և անհրաժեշտ այլ աջակցություն:
- Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, հաշվի առնելով սիրիահայ գործարարների մոտ առաջացած բազմաթիվ խնդիրները, ինչպես նաև սիրիահայերի կողմից գործարար աջակցման առաջարկությունները, նախաձեռնել է Գործարար սիրիահայերի միությունը: Միության հիմնական ծրագրերն ուղղված են սիրիահայ գործարարների ցանցի ստեղծման, արտադրանքի և ծառայությունների համար հաճախորդների որոնման, շուկայավարման, օրենսդրական պարզաբանումներին և այլն:

*“Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին” 2013 թվականի ծրագրով” “Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն” ծրագրային միջոցառման իրականացմանը գումար չի հատկացվել:*

### **3. Տեղական և տարածքային տնտեսական զարգացում**

2013 թվականի ընթացքում “Տեղական տնտեսական զարգացում” ծրագրային ուղղությունն իրականացրել է տարածաշրջանային և համայնքային տնտեսական զարգացման ծրագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության բոլոր մարզերում քարտեզագրվել են 100 (հարյուր) համայնքներ (յուրաքանչյուր մարզում՝ 10 համայնք): Քարտեզագրման արդյունքներն ամփոփվում են և կներկայացվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ պաշտոնական կայքում՝ [www.smednc.am/ecomap](http://www.smednc.am/ecomap).

Համայնքների տնտեսական ներուժի բացահայտման ուղղությամբ PACA վարժություններ են իրականացվել 19 համայնքներում: Դրանք են՝ Տավուշի մարզի Իջևան, Գանձաքար և Գետահովիտ, Բերդ համայնքները, Վայոց Ձորի մարզի Արենի, Աղավնաձոր և Ռինդ համայնքները, Գեղարքունիքի մարզի Լճաշեն, Չկալովկա և Նորաշեն համայնքները, Շիրակի մարզի Ազատան, Լոռու մարզի՝ Ստեփանավան և Տաշիր, Սյունիքի մարզի Խնձորեսկ, Հարթաշեն և Ներքին Խնձորեսկ համայնքները և Արարատի մարզի Փոքր Վեդի, Լուսառատ և Եղեգնավան համայնքները: Վարժությունների արդյունքում բացահայտվել և համայնքի շահագրգիռ կողմերին են ներկայացվել մոտ 180 տնտեսական նախաձեռնություններ՝ անասնապահության, զբոսաշրջության, այգեգործության, գյուղմթերքների վերամշակման, ենթակառուցվածքների բարելավման, գինեգործության ոլորտներում: Կազմվել և տպագրվել են վերոնշյալ համայնքների տեղական տնտեսական վերլուծության արդյունքները՝ բուկլետի տեսքով:

Իրականացված և իրականացման փուլում գտնվող նախաձեռնություններ՝

- Իջևան քաղաքում իրականացվել է "Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության" ծրագիր՝ ուղղված հյուրատնային, չորանոցային, տուրիզմի, փայտամշակման ոլորտների զարգացմանը:
- Ռինդ, Արենի և Բագրատաշեն համայնքներում տեղադրվել են 100 հա հզորությամբ մեկական հակակարկտային կայաններ, որոնք կապահովեն վնասի կորստից մոտ 300 խաղողագործական և 50 այգեգործական տնտեսություններ:
- Արագածավան համայնքում "Հայաստանի մանուկներ" հիմնադրամի հետ համատեղ ավարտվել են 100 հա այգիների համար ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքները: Ջրագծի երկարությունը 1100 մետր է:
- Հուլիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում Բելառուսից Հայաստան են ներկրվել 120 MT3 82.1 տրակտորներ, 20 հատ կարտոֆիլ քանդող սարք, 6 հատ հացահատիկի պնևմատիկ շարքացաններ, 10 հատ ճշգրիտ ցանքերի սերմնացաններ, 20 հատ խոտի հավաքիչ մամլիչներ, 40 հատ գութան, 15 հատ խոտհնձիչ (կցորդ), 10 հատ կարտոֆիլ քանդիչ, 20 հատ կուլտիվատոր:

Ընթացիկ տարվա մարտ ամսից մեկնարկել է Ճապոնիայի միջազգային համագործակալության գործակալության (JICA) «Մեկ գյուղ, մեկ արտադրանք», այսուհետ՝ (OVOP- «One Village, One Product») համատեղ ծրագիրը: Ապրիլ ամսվա ընթացքում ՓՄՁ ՋԱԿ-ի անձնակազմի համար անց են կացվել սեմինարներ, որոնց ընթացքում ներկայացվել է ճապոնական փորձը, կիրառվող մեթոդները, ինչպես նաև մշակվել է հայկական OVOP հայեցակարգը՝ հիմնված ճապոնական և այլ երկրների փորձի վրա:

Հուլիս ամսին ՓՄՁ ՋԱԿ-ի 9 (ինը) փորձագետներ մասնակցել են Ճապոնիայում կազմակերպված դասընթացին, որի նպատակն էր ներկայացնել OVOP շարժումը Ճապոնիայում, OVOP շարժման առաջնորդման մեջ միջամտությունների իրականացման շրջանակները և գործընթացները, ինչպես նաև ծանոթացնել OVOP-ի վրա հիմնված տեղական ապրանքների/ծառայությունների զարգացման և շուկայավարման տարատեսակ հարթակներին: Դասընթացի արդյունքում մասնակիցները մշակել են տեղական տնտեսությունների զարգացման 5 (հինգ) միջամտության պլաններ:

Սեպտեմբեր ամսին ՓՄՁ ՋԱԿ-ի և գործընկեր կառույցների 15 (տասնհինգ) փորձագետների համար կազմակերպվել և անց է կացվել OVOP դասընթացավարների

դասընթաց, որի ընթացքում ներկայացվել են Ճապոնիայում կիրառվող շուկայավարման հարթակների տեխնիկաներ, շուկայավարման և ապրանքանշման վերաբերյալ նյութեր և վարժություններ, գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի խթանման տեխնիկաներ, ինչպես նաև վերանայվել են Ճապոնիայում անցկացված դասընթացի արդյունքում մշակված միջամտության պլանները:

Սեպտեմբերին կազմակերպվել և իրականացվել է Իջևանի Արվեստի Փառատունը: Ավելի քան 50 ձեռնարկություններ մասնակցել են փառատունի շրջանակներում կազմակերպված ցուցահանդեսին՝ վաճառելով շուրջ 10 մլն դրամի արտադրանք: Փառատունի շրջանակներում Իջևան է այցելել ավելի քան երկու հազար հյուր, վերականգնվել և լուսավորվել են 40 քանդակներ, բարեկարգվել է քաղաքի գլխավոր զբոսայգին, կազմակերպվել է մշակութային միջոցառումների շարք:

*“Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին” 2013 թվականի ծրագրով” “Տեղական և տարածքային տնտեսական զարգացում” ծրագրային միջոցառման իրականացմանը գումար չի հատկացվել:*

#### **4. Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնում**

##### *4.1. Հայաստանում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության ապահովում*

Հաշվետու ժամանակահատվածում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում աշխատանքներ են իրականացվել Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման, հայաստանյան և արտասահմանյան ձեռնարկությունների միջև գործարար կապերի հաստատման, գործարար համագործակցության հիմնապաշարի համալրման, ՁԵՑ-ի անդամ կազմակերպությունների միջև կապերի հաստատման և համագործակցության ընդլայնման, տեղեկատվության փոխանակման և այլ ուղղություններով:

Մշակվել և գործարարների շրջանում տարածվել է Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի էլեկտրոնային նորությունների ամսական տեղեկաթերթի 12 նոր համար՝ անգլերեն և հայերեն լեզուներով, որոնց հասցեատերերի քանակը գերազանցում է 3000-ը: Տեղեկաթերթը պարունակում է տեղեկատվություն հաղորդակցման կենտրոնի գործունեության, գործարար և տեխնոլոգիական համագործակցության առաջարկների և արտերկրում նախատեսվող գործարար միջոցառումների վերաբերյալ: Տեղեկաթերթը տեղադրվում է նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի պաշտոնական կայքում:

Բացի այդ, մշակվել և հայ գործարարների շրջանում է տարածվել նաև “Միջազգային գործարար համագործակցության միջոցառումներ” վերնագրով նոր տեղեկաթերթի 3 համար, որոնք իրենց մեջ ներառում են տեղեկատվություն

արտերկրներում տեղի ունեցող միջոցառումների մասին: Այս տեղեկաթերթի հասցեատերերի քանակը ևս գերազանցում է 3000-ը:

Հաշվետու ժամանակահատվածում ՁԵՑ-ի գործունեության շրջանակներում ձեռնարկությունների միջև գործարար համագործակցության հաստատման նպատակով ՁԵՑ-ի գործարար համագործակցության հիմնապաշարում տեղադրվել են ևս 48 գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ (*Հավելված 3*)՝ ընդհանուր առմամբ կազմելով 209: Ներկայումս ևս 13 գործարար համագործակցության առաջարկներ գտնվում են մշակման փուլում:

Գործարարների կողմից ներկայացված պահանջների համաձայն, հաշվետու ժամանակաշրջանում հարցում է կատարվել բամբակյա թելեր արտադրող ընկերությունների, հիդրոգեներատորներ արտադրող/վաճառող ընկերությունների, անասնակերերի նկատմամբ տարբեր երկրներում եղած պահանջարկի, "R.O.C.S." ապրանքանիշի մատակարար դառնալու պայմանների, քամու տուրբիններ արտադրող ընկերությունների, Շվեյցարիա չիր ներմուծելու պայմանների, մետաղյա խողովակներ և անկյունակներ արտադրողների, Ուկրաինայում СПК տեսակի արևածաղկի սերմ արտադրող ընկերությունների, բնական հյութերի արտադրության համար հոսքագծեր արտադրող սարքավորումներ արտադրող ընկերությունների, բամբակ արտադրող սարքավորումներ արտադրող ընկերությունների, թելերը փաթաթող սարքավորումներ արտադրող ընկերությունների, լամինատը ուղղահայաց կտրելու համար նախատեսված սղոցներ արտադրող ընկերությունների, բուրդ և բամբակ լվացող լվացող սարքավորում արտադրող, գետնախնձորի սերմացուներ արտահանող ընկերությունների և այլնի վերաբերյալ:

Համապատասխան տեղեկատվություն է ստացվել ՁԵՑ-ի Ռուսաստանի, Ֆրանսիայի, Էստոնիայի, Շվեյցարիայի, Ուկրաինայի, Բրիտանիայի, Լեհաստանի, Սլովակիայի, Իտալիայի, Չեխիայի, Բուլղարիայի, Թուրքիայի, Գերմանիայի և այլ երկրների գործընկերներից, որը փոխանցվել է գործարարներին:

Ընդհանուր առմամբ, ՁԵՑ-ի ներցանցում տեղադրված գործարար համագործակցության առաջարկների նկատմամբ ստացվել են 122 հետաքրքրության առաջարկներ Իտալիայից, Խորվաթիայից, Չեխիայից, Թուրքիայից, Լիտվայից, Բուլղարիայից, Սլովենիայից, Դանիայից, Ռումինիայից, Էստոնիայից, Պորտուգալիայից, Հունաստանից, Չեխիայից, Մեծ Բրիտանիայից, Ռուսաստանից, Թուրքիայից, Լիտվայից և այլն: Միաժամանակ, հայկական 34 ընկերություններ հետաքրքրությունների առաջարկներ են ներկայացրել 179 ընկերությունների նկատմամբ (Իտալիա, Թուրքիա, Բուլղարիա, Կիպրոս, Ռուսաստան, Իսպանիա, Հունաստան, Լեհաստան, Դանիա, Չեխիա, Մերքիա, Խորվաթիա, Ռումինիա, Ֆրանսիա, Գերմանիա և այլն): Հաշվետու ժամանակահատվածում 60-ից ավելի գործարարների միջև փոխանակվել են կոնտակտային տվյալներ, որոնցից 7-ի միջև ներկայումս բանակցություններ են ընթանում համագործակցության հաստատման ուղղությամբ:

*Ընդհանուր առմամբ 2013 թվականի ընթացքում ՁԵՑ-ի շրջանակներում աջակցություն են ստացել թվով 243 ՓՄՁ սուբյեկտներ, այդ թվում.*

- 42 ՓՄՁ սուբյեկտների համար նախապատրաստվել և ՁԵՑ համապատասխան գործընկերներին են ուղարկվել հետաքրքրության առաջարկներ,



- Հայաստանյան 122 ՓՄՁ սուբյեկտների նկատմամբ ստացվել են հետաքրքրության առաջարկներ և ներկայացվել են նշված ընկերությունների տվյալները,
- 48 ՓՄՁ սուբյեկտների գործարար համագործակցության նկարագրեր տեղադրվել են Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցում,
- 31 ՓՄՁ սուբյեկտների կողմից ստացված հարցումներ տեղադրվել են ՁԵՑ-ում:

7.2. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում

ՓՄՁ պետական աջակցության ծրագրային ուղղություններով նախատեսված միջոցառումների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով 2013 թվականի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համագործակցություն է հաստատել նոր կազմակերպությունների հետ:

Մասնավորապես հաշվետու ժամանակահատվածում ընդլայնվել է համագործակցությունը **ԱՄՆԱԶԳ “Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն” USAID/EDMC ծրագրի** հետ: Համագործակցության հիմնական ուղղություններն են չրագործության ոլորտի զարգացման ծրագրերի իրականացումը ՀՀ մարզերում, գործարար ծառայությունների շուկայի զարգացումը, ՓՄՁ-ների արտահանման կարողությունների ընդլայնումը: Հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել է չրագործության ոլորտի միջազգային փորձագետ, կազմակերպվել են բազմաթիվ հանդիպումներ չրագործների հետ, մշակվում են որակի ստանդարտներ, իրականացվել է դասընթացավարների վերապատրաստում և այլն: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ մարզերում գործող ՓՄՁ սուբյեկտների համար կազմակերպվել են «Ֆինանսական պլանավորում գերփոքր և փոքր ձեռնարկությունների համար» թեմայով դասընթացներ (մանրամասները ներկայացված են 6-րդ բաժնի “բ” ենթակետում): Տպագրվել է “Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցման ծրագրերի և ծառայություններ մատուցող կազմակերպությունների տեղեկագրի” 7-րդ հրատարակությունը: ՓՄՁ-ների արտահանման կարողությունների զարգացման նպատակով ընթացքի մեջ է արտահանման ընթացակարգերը նկարագրող ոլորտային ուղեցույցերի մշակման և տպագրության հարցը:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՄԱԿ-ի փախստականների **հարցերով զերազույն հանձնակատարի Հայաստանյան գրասենյակի (UNHCR)** ֆինանսավորմամբ 2013 թ. մարտից կազմակերպել է մի շարք գործարար դասընթացներ սիրիահայերի համար:

**Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) Հայաստանյան** գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում ՓՄՁ ԶԱԿ-ի 3 աշխատակիցներ մասնակցել են “Շահութաբեր, ռեսուրսաարդյունավետ կառավարման համակարգ” (ProREMaS) ծրագրի դասընթացավարների վերապատրաստմանը: Դասընթացն ուղղված է ընտրված փոքր և միջին ձեռնարկություններում մրցունակության բարձրացմանը և վաճառքի ծավալների

աճին՝ միևնույն ժամանակ կրճատելով նրանց հումքի, էներգիայի և կոշտ թափոնների ծախսերը: Դասընթացին մասնակցած և դասընթացավարի որակում ստացած ՓՄՁ ԶԱԿ-ի մասնագետների կողմից այնուհետև դասընթաց է անցկացվել 2 խումբ ՓՄՁ սուբյեկտների համար:

Ս.թ. մարտի 1-ից համագործակցություն է հաստատվել Հայաստանում իր գործունեությունը ծավալած **Գերմանիայի տնտեսագիտական միության** հետ, որի հիմնական նպատակն է զարգացնել Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Վրաստանի ու Հայաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունները: Համագործակցության շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից աջակցություն կցուցաբերվի հայ գործարարների Գերմանիայում գործարար կապերի հաստատման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել և շուրջ 3000 գործարարների շրջանում տարածվել է հայ-գերմանական չորս գործարար տեղեկաթերթեր, որոնք ներառում են գործարար համագործակցության առաջարկներ գերմանական ընկերությունների կողմից, օգտակար տեղեկատվություն հայ-գերմանական գործարար միջավայրի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն՝ Հայաստանում Գերմանիայի տնտեսագիտական միության մասին: Արդեն իսկ ստացվել են հետաքրքրության առաջարկներ և կոնտակտային տվյալներ են փոխանակվել 12 գործարարների միջև: Համագործակցության շրջանակներում ս.թ. հունիսի 28-ին Վրաստանից ժամանած փորձագետի կողմից հայ գործարարներին ներկայացվեց Գերմանիայի “Ավագ փորձագիտական ծառայության” (Senior Expert Service-SES), ինչպես նաև տեղեկատվություն տրամադրվեց IXPOS և GTAI գործարար հարթակների, գերմանական ընկերությունների տվյալների բազայից օգտվելու կարգի, գերմանական և համաշխարհային ցուցահանդեսների վերաբերյալ: Հանդիպմանը ներկա էին շուրջ 40 գործարարներ:

ՀՀ Սյունիքի Մեղրիի տարածաշրջանում “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի” (ԱԳԶԿ հիմնադրամ) աջակցությամբ սկսվել է **“Աջակցություն չրաքտադրության զարգացմանը Հայաստանում”** ծրագիրը, որի շրջանակներում իրականացվելու են չրագործության զարգացմանն ուղղված աջակցության միջոցառումներ: Ս.թ. մայիսի 17-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ և “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն” հիմնադրամի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր, որի շրջանակներում ԱԳԶԿ հիմնադրամը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրում է դրամաշնորհ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ներկայացուցչության ստեղծման համար:

*Առանձին ծրագրերի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները ներկայացվում են ստորև.*

**“Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում” ՄԱԶԾ/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ համատեղ ծրագիր**

Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում ՄԱԶԾ/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ համատեղ ծրագիրը իրականացվում է սկսած 2004 թ.-ից: Ծրագրի հիմնական նպատակն է ուղղակի և Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի հնարավորությունների ամրապնդման միջոցով կենտրոնական և ռեգիոնալ մակարդակներում փոքր և միջին

ձեռնարկություններին աջակցության տրամադրումը: Ծրագիրն իրականացվում է ՄԱԶԾ-ի կողմից տարեկան աշխատանքային ծրագրերի միջոցով, որոնք մշակվում են ՓՄՁ աջակցության տարեկան ծրագրերի համաձայն:

Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում **“Տեղական տնտեսական զարգացման”** բաղադրիչի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք առաջարկվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացված գյուղական համայնքների զարգացման խնդիրների մասնակցային ախտորոշման արդյունքում: Մասնավորապես ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան համայնքում “Հայաստանի մանուկներ” հիմնադրամի հետ համատեղ կառուցվել է ոռոգման ջրագիծ 100 հա այգիների ոռոգման համար: ՀՀ Վայոց Ձորի մարզի Ռինդ, Արենի և ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշեն համայնքներում տեղադրվել են 100 հա հզորությամբ մեկական հակակարկտային կայաններ, որոնք կարկտի հնարավոր վնասներից կապահովեն մոտ 300 խաղողագործական և 50 այգեգործական տնտեսությունների: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել նաև Իջևանի արվեստի փառատոնի անցկացմանը, որին մասնակցել են ՀՀ վարչապետը, կառավարության անդամներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ, գործարարներ և այլն: **“ՓՄՁ-ների գործարար գիտելիքների և հմտությունների բարելավում”** բաղադրիչի շրջանակներում իրականացվել են “Սկսնակ գործարարների աջակցության” 5 ծրագրեր ՀՀ Արմավիրի (Արմավիր), Արարատի (Արտաշատ), Տավուշի (Նոյեմբերյան, Բերդի և Սյունիքի (Մեղրի) մարզերում: Հյուրատների կլաստերների զարգացման ծրագրի շրջանակներում կազմակերպվել է հնգօրյա դասընթաց հյուրատների և հյուրընկալության ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչների համար ՀՀ Տավուշի, Լոռու և Վայոց Ձորի մարզերում: Ընդհանուր առմամբ վերապատրաստում է անցել 29 հոգի:

Ծրագրի շրջանակներում մշակվել և գործարարների շրջանում տարածվել է հաշվապահական հաշվառման պարզեցված ուղեցույցը ՓՄՁ սուբյեկտների համար:

**“Օրինակելի բիզնես մոդելների մշակում”** բաղադրիչի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել ՀՀ Արմավիր, Արարատի և Տավուշի մարզերում չրագործության զարգացման ծրագրի իրականացմանը: Մասնավորապես, ընտրված 16 չրագործներին աջակցություն է ցուցաբերվել 5 էլեկտրական չորանոցների և 11 արևային չորանոցների ձեռք բերման հարցերում: Ընթացքի մեջ են ՀՀ Արմավիրի մարզում չրերի հավաքման, փաթեթավորման և վաճառքի կենտրոնի հիմնադրման աշխատանքները:

**“Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ կարողությունների զարգացում”** բաղադրիչի շրջանակներում իրականացվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հաշվապահական կենտրոնի վերանորոգման և կահավորման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում ս.թ. նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 1-ը ՓՄՁ աջակցության ոլորտում լավագույն փորձի ուսումնասիրության, տեղեկատվության փոխանակման և կապերի հաստատման նպատակով տեղի է ունեցել այցելություն Չեխիայի մայրաքաղաք Պրահայի գործարար ծառայություններ մատուցող կազմակերպություններ, այդ թվում նաև Պրահայում գտնվող ԶԵՅ գործընկեր կազմակերպություններ:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ ծառայությունների լուսաբանման և տեղեկատվության հասանելիության բարձրացման նպատակով ծրագրի շրջանակներում հեռարձակվել են մի շարք հեռուստահաղորդումներ:

**“Սնծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագիր**

***“Տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման ցանցը՝ որպես որոշիչ գործոն Սնծովյան տարածաշրջանում մրցակցության խթանման համար” (LRED Net)***

Ծրագրի ընդհանուր համակարգումն իրականացվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից. Մասնակից երկրներն են՝ Հունաստանը, Վրաստանը, Բուլղարիան և Մոլդովան: Ծրագրի նպատակն է ուսումնասիրել մասնակից երկրների տեղական տնտեսական զարգացման (SSՁ) նախաձեռնությունները, առկա ծրագրերն ու գործիքները, ապահովել փորձի և գիտելիքների փոխանակում SSՁ ծրագրերի վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում կբացահայտվեն նաև ծրագրի մասնակից համայնքների/տարածաշրջանների մրցակցային առավելությունները և կմշակվեն արժեքային շղթաներ մասնակից երկրների միջև: Առևտրային կապերի զարգացման նպատակով աջակցություն կցուցաբերվի գործարար կապերի և համագործակցության հաստատման գործում: Ծրագրի բյուջեն կազմում է 473, 2 հազ. եվրո, այդ թվում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի բյուջեն՝ 103.04 հազ. եվրո :

Ծրագիրը պաշտոնապես մեկնարկել է ս.թ. հուլիսի 1-ից և կտևի մինչև 2015թ. Հունիսի 30-ը :

Ծրագրի շրջանակներում Երևանում կայացել է “Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման” PACA գործիքակազմի վերապատրաստման դասընթացը, որին մասնակցում էին ծրագրի մասնակից գործընկեր երկրների մասնագետները: Վերապատրաստումն անցկացվել է միջազգային փորձառություն ունեցող գերմանացի խորհրդատուի կողմից: Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է PACA ուղեցույցը և ուղարկվել բոլոր մասնակից գործընկերներին: Ընթացքի մեջ են մասնակից երկրների 3-ական համայնքներում PACA գործիքի միջոցով տնտեսական ախտորոշման գործընթացները:

“Սնծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը որպես գործընկեր մասնակցում է նաև ***“Տարածաշրջանային բիզնես ինկուբատորների ցանց” (Balck Sea BI-Net) ծրագրին:*** Ծրագրի նպատակն է ուսումնասիրել և ներդնել ծրագրի մասնակից երկրների փորձը բիզնես ինկուբատորների ստեղծման և կառավարման բնագավառում, ստեղծել ինկուբատորների տարածաշրջանային ցանց: Ծրագրի համակարգողն է Մոլդովայի ՓՄՁ զարգացման գործակալությունը (ODIMM), մասնակից երկրներն են՝ Հունաստանը, Ռումինիան, Հայաստանը, Ուկրաինան և Թուրքիան: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի բյուջեն՝ կազմում է 105.35 հազ. եվրո: Հաշվետու ժամանակահատվածում համաձայնագիր է կնքվել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Մոլդովայի ՓՄՁ զարգացման գործակալության (ODIMM) միջև և ներկայացվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Ծրագիրը պաշտոնապես մեկնարկել է ս.թ. մարտի 27-ին և կտևի մինչև 2015թ. մարտի 27-ը:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է ծրագրի տեղեկատվական բրոշյուրը, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ ներկայացուցիչը մասնակցել է Մոլդովայում կազմակերպված ծրագրի մեկնարկային հանդիպմանը, մշակվել և գործընկերների հետ համաձայնեցվել է առաջին տարվա գործողությունների ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում ս.թ. հոկտեմբերի 2-4-ը Երևանում տեղի է ունեցել աշխատաժողով, որին մասնակցել են գործընկեր երկրներից ժամանած, տեղական իշխանությունների, բիզնես ինկուբատորների, գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչները, ինչպես նաև ծրագրի համակարգողները: Աշխատաժողովի ընթացքում մասնակիցներին ներակայացվել է բիզնես ինկուբատորների ստեղծման և զարգացման հայկական փորձը, այցելություններ են կազմակերպվել գործող բիզնես ինկուբատորներ: Նոյեմբերի 18-20-ը Հունաստանի Սալոնիկ քաղաքում տեղի է ունեցել դասընթաց-սեմինար, որը նվիրված է եղել ծրագրում ներգրավված փորձագետների կողմից իրականացվելիք հետագա աշխատանքներին և ընթացակարգերին, ինչպես նաև քննարկվել են մի շարք այլ հարցեր: Ներկայումս ընթացքի մեջ է ծրագրի մասնակից երկրներում գործող բիզնես ինկուբատորների քարտեզագրման գործընթացը:

**“Կանանց ձեռներեցության զարգացում” Ասիական զարգացման բանկի (ADB)/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ համատեղ ծրագիր**

Ասիական զարգացման բանկի (ADB) տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացվող **“Կանանց ձեռներեցության զարգացում” ծրագիրը** մեկնարկել է 2013թ. մարտի 1-ից և տևելու է մինչև 2015 թ. դեկտեմբերը: Ծրագրի նպատակն է բարելավել կանանց ձեռնարկատիրական կարողությունները և բարձրացնել ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը կին գործարարների համար: Ծրագիրն իրականացնող կազմակերպությունն է գերմանական “Փեմ Քրնսալթ” ընկերությունը:

Հաշվետու ժամանակահատվածում կանանց ձեռներեցության զարգացման հարցերում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կարողությունների զարգացման նպատակով ծրագրի շրջանակներում ս.թ. մարտի 25-29-ը կազմակերպել է կանանց արժեշխյանների գործիքների վերաբերյալ հատուկ դասընթաց, որը անց է կացրել Գերմանիայի Mesopartner ընկերության միջազգային փորձագետ Ֆրանկ Վելթրինգը: Դասընթացավարների վերապատրաստման (TOT) 5-օրյա դասընթացին մասնակցել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային և կենտրոնական գրասենյակների 14 փորձագետ:

Ծրագրի շրջանակներում ս.թ. ապրիլի 30-ից մայիսի 3-ը կազմակերպվել է ռեգիոնալ տնտեսական զարգացման վերաբերյալ դասընթաց: Դասընթացավարների վերապատրաստման (TOT) դասընթացին մասնակցել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային և կենտրոնական գրասենյակների 15 փորձագետ: Դասընթացի նպատակն էր փոխանցել ռեգիոնալ տնտեսական զարգացման նոր գործիքներ, որոնք կնպաստեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ռազմավարության բարելմանը, աջակցման նոր ուղղությունների բացահայտմանը, ինչպես նաև կանանց ներգրավվածության բարձրացմանը:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել է նաև վերապատրաստում CEFE (Գիտելիքահեն տնտեսություն՝ ձեռնարկությունների կայացման ճանապարհով) մեթոդաբանության գծով, որը ՓՄՁ ԶԱԿ-ի հիմնական գործիքն է սկսնակ գործարարների աջակցության բնագավառում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի, ինչպես նաև մի քանի ԳՕՄ-ների 15 փորձագետներ մասնակցեցին դասընթացին, որոնցից 5-ը դասընթացի ավարտին ստացան CEFE դասընթացավարի, մնացած 10-ն էլ՝ CEFE

դասընթացավարի օգնականի որակավորման վկայականներ: Դասընթացը վարում էր Գերմանիայից ժամանած CEFЕ միջազգային դասընթացավար Հելենե Ցիշանգը:

Համագործակցության շրջանակներում կազմակերպվել է նաև կին գործարարների կարիքների ուսումնասիրություն, որին մասնակցել են 743 կին գործարարներ Հայաստանի բոլոր մարզերից և Երևանից:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են ”Սկսնակ գործարարների աջակցության” 11 ծրագրեր, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են 203 սկսնակ գործարարներ, որոնցից 95-ը՝ կին: Ծրագրի շրջանակներում 2013թ. ընթացքում ֆինանսական աջակցություն են ստացել 71 գործարարներ ևս շուրջ 10-ը գտնվում են ֆինանսավորման փուլում:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է կանանց ձեռներեցության զարգացմանն ուղղված ռազմավարություն, որը ներկայացվել է ոլորտի դերակատարներին հոկտեմբերի 17-ին կայացած աշխատանքային հանդիպման ընթացքում: Մասնակից կառույցները իրենց պատրաստակամությունն են հայտնել մասնակցելու ռազմավարության իրականացմանը:

***“Արդյունավետ աշխատանք Հայաստանում երիտասարդների համար. երիտասարդ ձեռներեցներին աջակցություն” ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համատեղ ծրագիր***

2013թ. մարտի 20-ին Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (ՄԱԶԿ) միջև ստորագրվեց համաձայնագիր՝ սկիզբ դնելով ***“Արդյունավետ աշխատանք Հայաստանում երիտասարդների համար. երիտասարդ ձեռներեցներին աջակցություն”*** ծրագրի իրականացմանը:

**Ծրագրի հիմնական նպատակն է՝** աջակցության ցուցաբերումը երիտասարդ գործարարներին:

**Ծրագրի հիմնական ուղղություններն են.**

- Երիտասարդ գործարարներին տեղեկատվական և խորհրդատվական (տեխնիկական) աջակցության տրամադրում,
- Երիտասարդ գործարարներին ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում,
- գործարար հմտությունների և գիտելիքների մակարդակի բարձրացում,
- երկրում բարենպաստ բիզնես միջավայրի ապահովում:

**Ծրագրի աշխարհագրությունը՝** փորձնական փուլում ծրագրի թիրախներն են ՀՀ Լոռու և Շիրակի մարզերը:

Ծրագրի շրջանակներում ընտրված երիտասարդ գործարարներին տեխնիկական, և ֆինանսական աջակցությունը կտրամդրվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից, արդեն իսկ փորձարկված մեթոդների և գործիքների միջոցով, ներառյալ՝ ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասըթացներ, գործարար ծրագրերի մշակում, անհատական խորհրդատվություններ, վարկային երաշխավորությունների տրամադրում (100%) առավել իրատեսական գնահատված ծրագրերին և այլն: Ծրագրի ընթացքում նախատեսվում է

իրականացնել **25** “Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրեր” շուրջ **300 սկսնակ երիտասարդ գործարարների** մասնակցությամբ և արդյունքում ունենալ առնվազն **80** ֆինանսավորված գործարար ծրագրեր:

**Ծրագրի ընդհանուր տևողությունը** 44 ամիս է: Ծրագրի ֆինանսավորումը իրականացվում է Ավստրիայի կառավարության կողմից:

Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում մեկնարկել է երիտասարդների մասնակցությամբ “Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության” առաջին ծրագիրը ՀՀ Շիրակի մարզի Արթիկ և ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքներում:

**“Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնություն”**  
**Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ համատեղ ծրագիր**

Ծրագրի հիմնական նպատակն է տեղական տնտեսական զարգացման բնագավառում ճապոնական փորձի ուսումնասիրությունը (One Village One Product-OVOP) և ներդրումը Հայաստանում՝ ուղղված համայնքների տնտեսական ներուժի բացահայտմանը, տեղական արտադրանքի որակի բարելավմանը, տեղական նոր ապրանքանիշերի զարգացմանը և առաջնումանը շուկաներում: Ծրագիրը պաշտոնապես մեկնարկել է ա.թ. մայիսի 14-ին և կտևի մինչև 2016թ.:

Հաշվետու ժամանակահատվածում ճապոնիայից ժամանած փորձագետների հետ համատեղ կատարվել են այցելություններ ՀՀ մարզեր, ուսումնասիրվել են մարզային ՓՄՁ սուբյեկտների կարիքները և նախապատրաստվել է ծրագրի աշխատանքային պլանը: Ճապոնացի փորձագետները Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերի ներկայացուցիչներին ներկայացրել են Ճապոնիայի փորձը տեղական տնտեսական զարգացման (SSՁ) բնագավառում: Անցկացվել են մի շարք դասընթացներ Հիմնադրամի փորձագետների համար, կազմակերպվել է Իջևանի Արվեստների Փառատոնը:

Ծրագրի շրջանակներում ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող “Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման” ծրագրի հետ համատեղ մեկնարկել են Գեղարքունիքի մարզի Լճաշեն, Չկալովկա և Նորաշեն համայնքային կլաստերներում պանրի արտադրությունը խթանելու և շուկաներում առաջնուման և տեղի ապրանքանիշի կայացմանն աջակցելու նպատակով պանրի արտադրության ուսումնական կենտրոնի հիմնադրման աշխատանքները: Մասնավորապես կիրականացվեն մի շարք տեխնոլոգիական դասընթացներ, կմշակվի և կիրատարակվի պանրի արտադրության տեխնոլոգիական գրքույկ, ինչպես նաև ձեռք կբերվեն պանրի արտադրության ուսումնական կենտրոնի համար անհրաժեշտ սարքավորումներ:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է նաև հայկական OVOP լոգոտիպը, ինչպես նաև մշակվել, տպագրվել և տարածվել են ծրագրի վերաբերյալ տեղեկատվական բրոշյուրներ:

**ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացնող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր**

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ս.թ. օգոստոսի 1-ից ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացնում է «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» 5 տարի տևողությամբ ծրագիրը<sup>2</sup>:

Ծրագրի նպատակը գյուղական համայնքների հզորացումն է, դրանց տնտեսական ներուժի բացահայտման և զարգացման միջոցով, մասնավորապես.

- գյուղական համայնքներում մրցակցային առավելությունների գնահատման հիման վրա տեղական տնտեսական զարգացման նախաձեռնությունների բացահայտում և իրականացում,
- ձեռնարկատիրական հմտությունների զարգացում, օրինակելի բիզնես մոդելների մշակում և տարածում,
- ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովում, շուկաների հասանելիության աջակցություն,
- ենթակառուցվածքների բարելավում,
- համապատասխան գիտելիքների և հմտությունների փոխանցում բնապահպանական միջոցառումների անցկացման և բնական ու մարդածին աղետների կանխարգելման, ռիսկերի կառավարման և նվազեցման վերաբերյալ,
- կանանց և երիտասարդների համար զբաղվածության հնարավորությունների ընդլայնում:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել Ծրագրի անձնակազմի համալրման, գործընկեր կազմակերպությունների հետ փոխհարաբերությունների հստակեցման, առաջին տարվա համար աշխատանքային ծրագրի և միջոցառումների մշակման և այլ գործողությունների շուրջ:

Տեղական տնտեսական զարգացման նախաձեռնությունների բացահայտման նպատակով Ծրագրի շրջանակներում առաջին գնահատումները մեկնարկել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա, Նորաշեն և Լճաշեն և ՀՀ Սյունիքի մարզի Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ, Հարթաշեն և Քարաշեն գյուղական համայնքների կլաստերում: Ընթացքի մեջ են նույն վայրում պանրի արժեշոթայի վերլուծության և «Սկսնակ գործարարների աջակցության» ծրագրի իրականացման աշխատանքները:

***“Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին” 2013 թվականի ծրագրով” “Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնում” ծրագրային միջոցառման իրականացմանը գումար չի հատկացվել:***

<sup>2</sup> Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հաղթող է ճանաչվել ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից 2012թ. սեպտեմբերի 18-ին հայտարարված “Partnership for Rural Prosperity” դրամաշնորհային ծրագրի մրցույթի արդյունքում:



## 5. Արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցություն (ուլորտային աջակցության ծրագիր)

2013թ. փետրվարից Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը (ՓՄՁ ԶԱԿ) ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակություն» ծրագրի (EDMC) և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հետ համատեղ ՀՀ Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Տավուշի և Սյունիքի (մասնավորապես Մեղրիի տարածաշրջանում՝ Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի (CARD) աջակցությամբ) մարզերում շարունակում է **“Աջակցություն չրարտադրության զարգացմանը Հայաստանում”** ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում են չրագործության զարգացմանն ուղղված աջակցության միջոցառումներ:

Մոտ 100 չրագործի հետ անց են կացվել հարցազրույցներ, և ծրագրի պահանջների բավարարող 60 չրագործ ընտրվել են որպես ծրագրի շահառու:

Մարտ-ապրիլ ընկած ժամանակահատվածում “Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակություն” ծրագրի (EDMC) կողմից հրավիրված միջազգային փորձագետը՝ Ռ. Մալոսսին, անցկացրել է չրագործության ոլորտում դասընթացավարների տեխնոլոգիական դասընթաց, որին մասնակցել են հայտարարության և հարցազրույցի հիման վրա ընտրված դիմորդները: Դասընթացը տեղի է ունեցել ապրիլի 9-11-ը ՓՄՁ ԶԱԿ-ում: Մասնակցել են 17 դիմորդներ:

Ապրիլի 18-ին փորձագետ Ռ. Մալոսսին ներկայացրել է իր կողմից կատարված աշխատանքը և հիմնական առաջարկությունները: Ներկա էին միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, չրագործները, սկսնակները, դասընթացավարների տեխնոլոգիական դասընթացի մասնակիցները, որոնց շնորհիվեցին ավարտական հավաստագրեր: Մալոսսիի կողմից մշակված ձեռնարկը EDMC-ի կողմից թարգմանվել է և տպագրվելու է 2014թ-ին:

Նույն ժամանակահատվածում շարունակվել է չրագործության աջակցության ծրագիրը Տավուշի, Արարատի, Արմավիրի մարզերում՝

- տրվել են հայտարարություններ տեղական զանգվածային լրատվամիջոցներով, ինչպես նաև գյուղապետարանների միջոցով;
- տեղի են ունեցել դիմորդների հետ հարցազրույց և ընտրություն;
- կազմակերպվել են CEFЕ դասընթացներ 50-ից ավելի սկսնակ չիր արտադրողի համար (մանրամասները ուսուցողական աջակցման ծրագրերի մասում), որի ավարտին մասնակիցները ներկայացրել են իրենց գործարար ծրագրերը;
- ներկայացված ծրագրերից 24-ը արժանացել են հավանության և համարվել ֆինանսավորման ենթակա;
- ՄԱԶԾ-ի հետ համատեղ գնվել և շահառուներին՝ (3 մարզի 12 չրագործի) հատկացվել է 798մ<sup>2</sup> ապակի և 3492մ (30x30x3մ) մետաղական անկյունակ՝ չորանոցները նորոգելու համար;
- Տավուշի մարզի Բագրատաշեն համայնքում “Զրի Հավաքման Կենտրոն”-ի հիմնադրման նպատակով աջակցություն է ցուցաբերվել կենտրոնի բիզնես պլանի

մշակման, նախագծի և նախահաշվի կազմման, շենքի հատկացման և այլ աշխատանքների կատարման ընթացքում;

- անցկացվել է Տավուշի մարզի Բագրատաշեն համայնքում կառուցվող “Չրի հավաքման կենտրոն”-ի շինարարական աշխատանքների մոնիտորինգ;
- հաշվետու ժամանակահատվածում նշված կենտրոնի կառուցման, սարքավորումների տեղադրման ու փորձարկման աշխատանքները ավարտին են հասցվել՝ սերտ համագործակցելով ՓՄՁ ԶԱԿ-ի արդյունաբերական համակարգերի կառուցման ծրագրերի (ԱՀԿԾ) ներկայացուցիչների հետ, և արդեն մթերվել, տեսակավորվել, փաթեթավորվել ու իրացվել է չրի առաջին խմբաքանակը;
- ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության “Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակություն” ծրագրի (EDMC) հետ համատեղ ՀՀ Տավուշի մարզի չրագործների համար կազմակերպվել են դասընթացներ “Մրգերի և բանջարեղենների չորացման տեխնոլոգիաներ և որակի ստանդարտներ” թեմայով 7 մասնակցի համար և “Մրգերի և բանջարեղենների չորացման սննդի անվտանգության նորմեր” թեմայով 15 մասնակցի համար;
- ՄԱԶԾ-ի ներկայացուցիչների հետ համատեղ կատարվել է Արմավիրի մարզի չրագործների կարիքների գնահատում, որի հիման վրա կայացվել է մարզում չրագործության ուսուցման և չրի արտադրության, հավաքման, փաթեթավորման և վաճառքի կենտրոն ստեղծելու վերաբերյալ որոշում;

Չրագործության աջակցության ծրագրի արդյունքում սկսվել և շարունակվում է շահառուների վարկավորման, ինչպես նաև ՄԱԶԾ-ի կողմից դրամաշնորհների տրամադրման գործընթացը: Հաշվետու ժամանակահատվածում չրի արտադրության նպատակով վարկավորվել է 25 և դրամաշնորհի տեսքով համաֆինանսավորում ստացել 15 շահառու:

Հաշվետու ժամանակահատվածում քայլեր են ձեռնարկվել Հայաստանում **հյուրատների զարգացման (B&B) աջակցության** գործընթացի ուղղությամբ: Հյուրատների զարգացման ուղղությամբ ընտրվել են երեք թիրախային վայրեր՝ Վայոց Ձորի Արենի, Աղավնաձոր և Ռինդ համայնքները, Տավուշի մարզի Իջևան քաղաքը և Լոռու մարզի Սանահին, Օձուն, Դսեղ և Հաղպատ համայնքները:

Նշված մարզերում, հյուրատների կլաստերների զարգացման ծրագրի շրջանակներում, կազմակերպվել են հնգօրյա դասընթացներ, որին մասնակցել են **28** հյուրատների և հյուրընկալության ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչներ (մանրամասները ուսուցողական աջակցման ծրագրերի մասում):

Կատարվել է նաև հյուրատների զարգացման նախադրյալների ուսումնասիրություն Երևանի տարածաշրջանում:

ՄԱԶԾ-ի հետ համատեղ աշխատանքներ են իրականացվել Կոթիի ապխտած պանրի արտադրության հզորացման ուղղությամբ:

ՀՀ-ում գինու արտադրության զարգացման մեծ ներուժով աչքի է ընկնում Վայոց Ձորի մարզը: Հենց այդ պատճառով էլ 2013թ-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հոլանդիայի PUM կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենի, Ռինդ, Աղավնաձոր, Վայք և Եղեգնաձոր համայնքեր է այցելել փորձագետ

**Ստույգ Մարտինը**, որը հանդիպել է մարզի 21 գինեգործի հետ (7 Արենիում, 5 Աղավնաձորում, 6 Ռինդում, 2 Եղեգնաձորում, 1 Վայքում) և իրականացրել նրանց արտադրանքների համտես-խորհրդատվություն:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է 2012թ. սկսված **զերմատների կառուցման աջակցության ծրագիրը**: Ամբողջությամբ ավարտվել են Պտղավան և Տավուշ համայնքներում համապատասխանաբար 17 և 12 ջերմատների կառուցման, հողի նախնական մշակման և նախապատրաստման աշխատանքները: Ջերմոցագործների հետ իրականացվել են 2-օրյա տեխնոլոգիական դասընթացներ և խորհրդատվություն, ինչպես նաև իրականացվել են բիզնես դասընթացներ: Ուսումնասիրվել են ջերմոցագործների կարիքները և հանձնվել են պատրաստի սածիլները: Հաշվետու ժամանակահատվածում ՄԱԶԾ (UNDP) և Բրիտանական OXFAM-ի կողմից հաջողությամբ իրականացվել են բոլոր ջերմատներում ոռոգման կաթիլային համակարգերի տեղադրման աշխատանքները:

2013թ-ի նոյեմբերին 8 օրով (17-ից մինչև 25-ը) Հոլանդական PUM կազմակերպության ջերմատների փորձագետ **Ռոբերտ Ջ. Վան Մեչելենը** այցելեց ՀՀ Տավուշի մարզի Իջևան, Պտղավան, Տավուշ, Լուսաձոր, Դիտավան և Բագրատաշեն համայնքեր: Այդ ընթացքում նա հանդիպել է մարզի 9 ջերմատների տերերի հետ, կատարել է նրանց գործունեության արդյունքների գնահատում և անցկացրել դասընթաց - խորհրդատվություն Իջևան և Տավուշ համայնքներում:

Բացի վերոհիշյալից, հաշվետու ժամանակահատվածում.

- CARD-ի հետ համատեղ աշխատանքներ են տարվել Նոյեմբերյանում Բիզնեսի զարգացման Տեղեկատվական Կենտրոնի հիմնադրման ուղղությամբ,
- կատարվել է Նոյեմբերյանի տարածաշրջանի ՓՄՁ կարիքների բացահայտում՝ Բիզնեսի զարգացման Տեղեկատվական կենտրոնի աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով,
- Ջուջեվանի պահածոների արտադրամասի հզորացման նպատակով մեկնարկել են վարկային փաթեթի կազմման, ինչպես նաև վարկային երաշխիքի տրամադրման ուղղությամբ աշխատանքները,
- ապահովվել է արդյունաբերական համակարգերի կառուցման ծրագրերի շահառուների՝ ջերմատնային տնտեսություն վարողների, չիր արտադրողների, հյուրատների (B&B) և այլ ոլորտների ձեռնարկատերերի ակտիվ մասնակցությունը Իջեվանում ՓՄՁ ՋԱԿ-ի նախաձեռնած Արվեստի փառատոնի շրջանակներում կազմակերպված տոնավաճառին:

**“Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին” 2013 թվականի ծրագրով” “Արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցություն” ծրագրային միջոցառման իրականացմանը գումար չի հատկացվել:**

## 6. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցություն

### ա) ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում

Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների, պահանջվող հումքի, նյութերի, սարքավորումների, ֆինանսավորման հնարավոր աղբյուրների վերաբերյալ տեղեկատվության որոնման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների ու հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև արտասահմանյան գործընկերների որոնման ու կապերի հաստատման ուղղություններով անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն:

ՀՀ հարկային օրենսդրության մեջ կատարված վերջին փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման նպատակով ս.թ. հունվար-փետրվար ամիսներին ՀՀ բոլոր մարզերում և ս.թ. մարտի 22-ին Երևան քաղաքում<sup>3</sup> տեղի ունեցան սեմինար-խորհրդատվություններ: Սեմինարներն իրականացվեցին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի, Գործարարության Աջակցության գրասենյակի և Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի մասնագետների օժանդակությամբ: Սեմինարների ընթացքում մանրամասն ներկայացվեցին հարկային օրենսդրության վերջին փոփոխությունները, մասնավորապես երկու նոր՝ "Շրջանառության հարկի մասին" և "Եկամտային հարկի մասին" ՀՀ օրենքները: Բացի այդ, գործարարները հնչեցրեցին բազմաթիվ հարցեր, որոնք ստացան իրենց պատասխանները, ինչպես նաև եղան բազմաթիվ առաջարկություններ, որոնք հավաքագրվել են, ամփոփվել և ներկայացվել շահագրգիռ կառույցների քննարկմանը: Վերը նշված սեմինար-խորհրդատվություններին ընդհանուր առմամբ մասնակցել են ավելի քան 800 ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ:

Բացի այդ, շուրջ 5 հազ. ՓՄՁ սուբյեկտներ տեղեկացվել են նշված փոփոխությունների մասին հեռախոսազանգերի, էլեկտրոնային փոստի, տեղեկատվական թերթիկներ տարածելու, ինչպես նաև "Եկամտային հարկի մասին" և "Շրջանառության հարկի մասին" ՀՀ օրենքների վերաբերյալ պարզեցված տեղեկատվական գրքույկներ բաժանելու և միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները "Կենսաթոշակային բարեփոխումների իրազեկման կենտրոն" հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում կենսաթոշակային բարեփոխումների, էլեկտրոնային ստորագրության ձեռքբերման և "Եկամտային հարկի մասին" ՀՀ օրենքի վերաբերյալ ՀՀ մարզերում ՓՄՁ սուբյեկտներին իրազեկելու և աջակցելու ուղղությամբ: Ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը հուվար-մարտ ամիսներին ՓՄՁ սուբյեկտներին աջակցել է նույնականացման քարտ կարդացող սարքեր ստանալու ուղղությամբ: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաձյուղերի միջոցով ավելի քան 4500 ՓՄՁ սուբյեկտի բաժանվել են նույնականացման

<sup>3</sup> Երևան քաղաքում միջոցառումը կազմակերպվել "Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն է" ՊՈԱԿ-ի և Գործարարության աջակցության գրասենյակի հետ համատեղ:

քարտ կարդացող սարքեր: Բացի այդ, Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի մասնագետները բազմաթիվ ՓՄՁ սուբյեկտների օգնել են լրացնել և հարկային մարմիններ էլեկտրոնային եղանակով ներկայացնել “Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզ. անձի անհատական տվյալների գրանցման հայտը” և “Եկամատային հարկի ամսական ամփոփ հաշվարկը”:

2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ում գործող “Թեժ գծի” և այցելությունների միջոցով ստացվել է **462 հարցադրում**: Ստացված հարցադրումներից 342-ն առնչվել են հարկային օրենսդրությանն ու վարչարարությանը, 45-ը՝ մաքսային օրենսդրությանն ու վարչարարությանը, 75-ը՝ ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող այլ բնագավառներին:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և տպագրվել է “Հաշվապահական հաշվառման պարզեցված ուղեցույց փոքր և միջին ձեռնարկությունների համար” 3 հատորյակը: “Կենսաթոշակային բարեփոխումների իրազեկման կենտրոն” հիմնադրամի և Միջազգային Տինանսական Կորպորացիայի կողմից Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ին են տրամադրվել համապատասխանաբար “Ինչ պետք է իմանալ եկամտային հարկի մասին” և “Շրջանառության հարկի մասին” պարզեցված տեղեկատվական գրքույկներ, որոնք ամբողջությամբ բաժանվել են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի գործարարներին:

2013թ-ի հունիս-հուլիս ամիսների ընթացքում ՎՋԵԲ Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետների և ՓՄՁ ՁԱԿ-ի մարզային գրասենյակի ներկայացուցիչների հետ համատեղ տեղի ունեցան ՀՀ մարզային հանդիպումներ ՓՄՁ ֆոկլուս խմբերի հետ: Հանդիպումներին մասնակցել են շուրջ 500 ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ: Հանդիպումների ընթացքում վերլուծություն կատարվեց սույն թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով ահմանված հարկի դրույքաչափերի ազդեցությունը ՓՄՁ սուբյեկտների վրա: Վերլուծությունն իրականացվել է վերջիններիս կողմից լրացված անանուն հարցաթերթիկների, ինչպես նաև դեմ առ դեմ քննարկումների արդյունքների հիման վրա, որոնց ընթացքում բացահայտվեցին «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի շրջանակներից դուրս այլ խնդիրներ: Վերլուծությունների արդյունքները ամփոփվել են հաշվետվության մեջ և տրամադրվել են շահագրգիռ կառույցներին, ինչպես նաև տեղադրվել Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կայքէջում:

2013թ.-ի ընթացքում զանգվածային լրատվամիջոցների հետ ակտիվ աշխատանք է տարվել կենտրոնի գործունեությունը լուսաբանելու և նոր ռազմավարությունն ու ուղղությունները հանրայնացնելու նպատակով: Բացի հեռուստահաղորդումներից, ՁԼՄ-երով բազմիցս ներկայացվել են Հայաստանի ՓՄՁՁԱԿ-ի գործադիր տնօրենի հարցազրույցները ՓՄՁ ոլորտի խնդիրների և Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի գործունեության վերաբերյալ: Մասնավորապես, հոդվածներ են տպագրվել “Արմենպրես” գործակալության կայքում, Ռեվյու ամսագրի էջերում, “Պանորամա”, “Առկա”, “Արմինֆո” լրատվական գործակալությունների, [www.lragir.am](http://www.lragir.am), [www.lin.am](http://www.lin.am), [www.times.am](http://www.times.am), [www.news.am](http://www.news.am), [www.tert.am](http://www.tert.am), [www.mamul.am](http://www.mamul.am), [www.ireport.am](http://www.ireport.am) էլեկտրոնային պարբերականներով, ինչպես նաև հարցազրույցներ են կազմակերպվել Հ1 հեռուստաընկերությամբ հեռարձակվող “Ինդեքս” և “Հրապարակում” հաղորդաշարերում, “Արմնյուզ” հեռուստաընկերության բիզնես լուրերով, “Բիզնես հարցազրույց”, “Մանրամասներ” հաղորդաշարերով, “Արմենիա” հեռուստաընկերության լրատվական թողարկումների

ընթացքում, Ինչպես նաև թողարկվել են հատուկ ռեպորտաժներ «Միր-24» և Գյումրիի տեղական հեռուստաընկերություններով:

Շարունակել է լուսաբանվել «Աջակցություն սիրիահայերին» ծրագիրը: Հատուկ վերլուծական հոդվածներ են հրապարակվել Արմենպրես լրատվական գործակալության կայքում, Ազատություն ռադիոկայանի էջում:

“Արմենպրես” գործակալության հետ արդյունավետ գործընկերության հիմք է դրվել, որի շրջանակում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հասարակության հետ կապերի բաժինը գործակալությանն է տրամադրում Հայաստանում բիզնես նախաձեռնած և հաջողության հասած գործարարների մասին պատմող պրոֆեսիոնալ լրագրողական հոդվածներ: Յուրաքանչյուր հինգշաբթի գործակալությունը թողարկում է «DOING BUSINESS» խորագիրը կրող հոդվածաշարի մեկական հոդված: Արդեն հրապարակվել է 20 հոդված: Ընդհանուր առմամբ, Կենտրոնի գործունեության մասին, տարբեր լրատվամիջոցներում տպագրվել է 37 հոդված:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը մեդիաարշավ է կազմակերպել նաև ՀՀ վարչապետի “Լավագույն կին գործարար” 2013թ. մրցանակաբաշխության կազմակերպման, հայտերի ընդունման և մրցանակաբաշխության օրը միջոցառման լուսաբանման ուղղությամբ: Լրատվամիջոցներով արշավի շնորհիվ վերևում նշված, ինչպես նաև դրանց հոդվածները վերատիրաժավորող լրատվամիջոցները և սոցցանցերի ակտիվ խմբերը տարածել են մրցանակաբաշխության լուսաբանման մասին տեղեկատվությունը:

Շարունակում է ակտիվորեն գործել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ֆեյսբուքյան էջը: Այն օգնում է երկխոսություն ծավալել շահառուների և կենտրոնի միջև: Ֆեյսբուքին զուգահեռ և կենտրոնի ֆեյսբուքյան էջի հետ համընթաց (սինխրոնացված) գործում է նաև կենտրոնի էջը Թվիթեր սոցիալական ցանցում: Յուրաքանչյուր վիդեո-սոցիալական ցանցում կենտրոնն արդեն մի քանի ամիս տեղադրում և ներբեռնում է իր գործունեության հետ կապ ունեցող տեսանյութերը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Հանրային հեռուստաընկերության Ինդեքս հաղորդաշարի հետ, ըստ որի մեկ տարվա ընթացքում հաղորդաշարը լուսաբանելու է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեությունը: Ինդեքսի հեռարձակման ժամանակը լավագույնն է Հայաստանի հեռուստաշուկայի դաշտում՝ 19:50-20:10, ինչը հնարավորություն է տալիս առավել մեծ լսարանի միջոցով իրազեկել կենտրոնի գործունեության մասին: Արդեն հեռարձակվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մասին պատմող 6 թողարկում:

*բ) ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն*

ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրի (ՁԶՇՄ) շրջանակներում 2012 թվականին կազմակերպված ֆինանսական ուսուցման դասընթացի (ToT) մասնակից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի փորձագետների կողմից 2013 թվականի ընթացքում ՀՀ բոլոր մարզերում կազմակերպվել է «Ֆինանսական պլանավորում գերփոքր և փոքր ձեռնարկությունների համար» թեմայով 24 դասընթացներ, որոնց մասնակցել են ընդհանուր առմամբ 391 գործարար:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է սկսնակ հաշվապահների անվճար 3 դասընթաց, որին մասնակցել են 57 սկսնակ հաշվապահներ:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ս.թ. ապրիլի 5-ին Տավուշի մարզի Իջևան, հունիսի 22-ին Լոռու մարզի Ալավերդի և հոկտեմբերի 19-ին Վայոց Ձորի մարզի Արենի քաղաքներում հյուրատների կլաստերների զարգացման ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հնգօրյա դասընթացներ հյուրատների և հյուրընկալության ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչների համար: Դասընթացի արդյունքում մասնակիցները ձեռք են բերել գիտելիքներ հյուրասիրության և հյուրընկալության կազմակերպման, համապատասխան պայմանների ապահովման, ծառայությունների մատուցման և հաճախորդների սպասարկման վերաբերյալ: Ընդհանուր առմամբ դասընթացներին մասնակցել են **28** գործարար:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի Կոտայքի մասնաճյուղում, էլնելով հաշվետվությունների պարտադիր էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հետևանքով առաջացած դժվարություններից, կազմակերպվել են “Համակարգչային հմտություններ” թեմայով անվճար դասընթացներ, որոնց մասնակցել են **20** գործարար:

Ս.թ. օգոստոսի 24-ին Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքում կազմակերպվել է ոլորտային դասընթաց «Մրգերի և բանջարեղենի չորացման սննդի անվտանգության նորմերը» թեմայով, որին մասնակցել են մարզում գործող **15** չրագործներ:

Ս.թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Գերմանիայի միջազգային համագործակցության կազմակերպության (GIZ) հովանավորությամբ տեղի ունեցավ «Շահութաբեր, ռեսուրսարդյունավետ կառավարման համակարգ» /ProREMaS/ թեմայով դասընթաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի Կոտայքի մասնաճյուղում: Դասընթացը անց կացրեցին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի փորձագետները, որոնք նախապես վերապատրաստում էին անցել տվյալ ոլորտում: Դասընթացին մասնակցեցին Կոտայքի մարզի **10** գործարարներ (*Հավելված 4*):

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՄԱԿ ՓԳՀ-ի ֆինանսավորմամբ իրականացրել է ՀԿԽԸ «Փախստականների ընդունում և ինտեգրում» ծրագրի շրջանակներում մեկօրյա բիզնես դասընթացներ **67** փախստականների և սիրիահայերի համար 6 առանձին խմբերով:

Ս.թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի (CDPF) հետ համագործակցության շրջանակներում մեկօրյա սեմինար/դասընթացներ է անց կացրել Երևան, Իջևան, Վանաձոր, Գավառ, Գյումրի, Գորիս և Կապան քաղաքներում՝ ուսանողների համար: Ընդհանուր առմամբ դասընթացներին մասնակցել են **105** ուսանողներ Երևանից և ՀՀ մարզերից (*Հավելված 4*):

#### *գ) Կանանց մրցակաբաշխության կազմակերպում*

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական նախաձեռնողականության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումները գնահատելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետը հայտարարել է մրցանակաբաշխություն **6** ուղղություններով՝

- «Լավագույն կին գործատու»,
- «Լավագույն կին նորարար, նախաձեռնող»,
- «Կին բարեգործ»,

- «Կին արտադրողի լավագույն ապրանքանիշ»,
- «Լավագույն երիտասարդ կին գործարար»,
- «Լավագույն սկսնակ կին գործարար»:

Մրցանակաբաշխության կազմակերպչական աշխատանքները իրականացվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից: Ապրիլի 5-ին կայացած մրցանակաբաշխության ընթացքում յուրաքանչյուր անվանակարգի համար շնորհվեց 2-ական մրցանակ Երևան քաղաքի և ՀՀ մարզի լավագույն կին գործարարներին, որի արդյունքում «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության 12 հաղթողներին պատվոգրեր հանձնեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Հայաստանում կանանց ձեռնարկատիրական գործունեությունը խրախուսելու նպատակով հատուկ մրցանակներ շնորհեցին նաև միջազգային մի շարք կազմակերպություններ, մասնավորապես՝ ԱՄՆ ՄԶԳ «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» (USAID EDMC) ծրագիրը, ԵԱՀԿ-ն (OSCE), Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), Ասիական զարգացման բանկի (ADB) «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագիրը: Մրցանակաբաշխության հաղթողների հետ սույն թվականի հունիսի 7-ին ԱՄՆ ՄԶԳ «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» (USAID EDMC) ծրագրի գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում/քննարկում, որի նպատակն էր քննարկել գործարար կանանց կարիքները և տրամադրել համապատասխան աջակցություն: Արդյունքում, ԱՄՆ ՄԶԳ «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» ծրագրի կողմից մրցանակակիր կանանց համար ս.թ. հուլիս ամսին կազմակերպվել է մեկամսյա անվճար դասընթաց «Մարքեթինգ» թեմայով:

*Հաշվետու ժամանակահատվածում գործարար ուսուցում, խորհրդատվություն և տեղեկատվության տրամադրման ուղղություններով ընդհանուր առմամբ գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 16168 աջակցություն, այդ թվում՝ 521-ը՝ ուսուցողական աջակցության ծրագրի շրջանակներում:*

**“Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին” 2013 թվականի ծրագրով” “ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական աջակցություն” ծրագրային միջոցառման իրականացմանը գումար չի հատկացվել:**

## **7. ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն**

### **7.1 Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն**

2013թ.-ի ընթացքում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 224 սկսնակ գործարար: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 789,4 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 798,1 մլն ՀՀ դրամ: Վարկավորումն իրականացվել է գործընկեր «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի միջոցով (*Հավելված 2.3*):



Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 3.6 մլն ՀՀ դրամ, վարկային միջոցների միջին գումարը՝ 3.6 մլն ՀՀ դրամ:

Ընդունված գործարար ծրագրերի ընդհանուր քանակը	<b><u>632</u></b>
Հաստատված և ընթացիկ փուլում գտնվող գործարար ծրագրերի քանակը	<b>100</b>
Մերժված կամ շահառուների կողմից չեղարկված գործարար ծրագրերի քանակը	<b>308</b>
Ֆինանսավորված գործարար ծրագրերի քանակ	<b><u>224</u></b>

**Տրամադրված երաշխավորություններն ըստ տարիների**

*/մլն դրամ/*

	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Երաշխավորություն	30.2	44.8	109.4	53.5	37.4	268.4	798.1
Վարկ	25.3	37.4	91.5	44.8	31.2	262.6	789.4
Քանակ	35	41	65	30	17	120	224

**Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներն ըստ մարզերի**

Մարզ	Քանակ	Վարկի գումար	Երաշխավորություն
Երևան	81	321.299.665	324.833.961
Գեղարքունիք	26	77.090.000	77.937.990
Արագածոտն	10	29.791.000	30.148.446
Արմավիր	25	95.038.600	96.084.025
Լոռի	4	12.459.500	12.604.455
Սյունիք	8	20.340.500	20.564.245
Կոտայք	9	28.500.500	28.838.542
Շիրակ	16	42.137.000	42.607.787
ՎայոցՁոր	13	49.367.980	49.896.070
Տավուշ	22	79.735.500	80.612.590
Արարատ	10	33.603.000	33.998.244
Ընդամենը	<b>224</b>	<b>789.363.245</b>	<b>798.126.355</b>

**7.2. ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիր**

2013 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում տրամադրվել է 125.9 մլն ՀՀ դրամ գումարի

երաշխավորություն 19 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով 314.7 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ:

Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկի միջին գումարը կազմել է 16.5 մլն ՀՀ դրամ, վարկային երաշխավորության միջին գումարը՝ 6.6 մլն ՀՀ դրամ, տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 14.2%: Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորությունների երաշխիքով միջին ապահովվածությունը կազմել է 47%: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր Զարգացման Հայկական Բանկի (1), ՎՏԲ-Հայաստան բանկի (3), Հայբիզնեսբանկի (1), Յունիբանկի (8), Անելիք բանկի (1), Կիլիկիա ՈԻՎԿ-ի (2), ՓՄՁ Ներդրումներ ՈԻՎԿ-ի (2) և Ֆարմ Կրեդիտ Արմենիա ՈԻՎԿ-ի (1) միջոցով: Տրամադրված երաշխավորությունների թիվն ըստ մարզերի կազմում է. Արմավիրի մարզում՝ 3, Գեղարքունիքի մարզում՝ 3, Շիրակի մարզում՝ 1, Վայոց Ձորի մարզում՝ 3, Արագածոտնի մարզում՝ 1, Արարատի մարզում՝ 2, Երևանում՝ 4, Սյունիքի մարզում՝ 1, Տավուշի մարզում՝ 1:

2013թ.-ի ընթացքում վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում աջակցություն ստանալու հայտեր են ներկայացրել 23 ՓՄՁ սուբյեկտ: Ստացված հայտերի դասակարգումն ըստ հաջորդական փուլերի ներկայացված է ստորև.

	/հատ/
<b><u>Բավարարված և վարկային երաշխավորություն ստացած հայտեր</u></b>	<b><u>19</u></b>
<i>Բանկերի կողմից նախնական և վարկային կումիսեով մերժված հայտեր</i>	<b>0</b>
<i>Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից մերժված և լրացուցիչ պարզաբանման ուղարկված հայտեր</i>	<b>4</b>
<i>Շահառուների կողմից ներկայացված հայտեր, որոնք հետագայում հրաժարվել են վարկավորվելուց</i>	<b>0</b>
<i>Ընթացիկ փուլում գտնվող հայտեր</i>	<b>0</b>
<b>Ընդհանուր հայտերի քանակը</b>	<b>23</b>

**ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի ցուցանիշները**

**Տրամադրված երաշխավորություններն ըստ մարզերի**

Մարզ	Քանակ	Վարկ	Երաշխավորություն	Ապահովվածության %	Վարկի տոկոս (միջին)	Միջին ժամկետայնություն (ամիս)
Գեղարքունիք	3	27.850.000	14.880.000	54%	15%	60
Արագածոտն	1	16.000.000	9.000.000	56%	15%	60
Արմավիր	3	50.000.000	27.400.000	53%	14%	52
Լոռի	0	0	0	0%	0%	0
Սյունիք	1	4.500.000	1.091.253	24.25%	15%	36

Կոտայք	0	0	0	0%	0%	0
Շիրակ	1	23.400.000	14.475.000	61.85%	15%	60
Վայոց Ձոր	2	105.000.000	23.000.000	35.1%	13%	60
Տավուշ	1	5.000.000	699.813	13.9%	12%	36
Արարատ	2	21.000.000	11.509.098	56%	13.5%	54
Երևան	4	54.000.000	18.300.000	39%	15%	60
Ընդամենը	18	306.750.000	120.355.164	45%	14.2%	55

*Տրամադրված երաշխավորություններն ըստ տարիների*

*/ մլն դրամ/*

	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Երաշխավորություն	25.5	197.6	342.2	375.7	213	246.5	63.5	52.1	166.1	125.9
Վարկ	47.3	366.1	628.1	722.7	391.1	435.2	136.3	90.9	285.5	314.7

*Տրամադրված երաշխավորություններն ըստ գործընկեր բանկերի*

Բանկ	Քանակ	Վարկ	Երաշխավորություն	Ապահովվածության %
Զարգացման Հայկական բանկ	1	23.400.000	14.475.000	61.85%
Յունիբանկ	8	107.000.000	45.900.000	45%
ՎՏԲ-Հայաստաբանկ	3	15.500.000	5.300.164	32.2%
Հայբիզնեսբանկ	1	8.400.000	5.880.000	70%
Անելիք	1	9.450.000	5.000.000	53%
Կիլիկիա ՈԻՎԿ	2	30.000.000	14.000.000	47%
ՓՄՁ Ներդրումներ ՈԻՎԿ	2	113.000.000	29.800.000	40.5%
ՖարմԿրեդիտԱրմենիա	1	8.000.000	5.600.000	70%

*“Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին” 2013 թվականի ծրագրով” “ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն” ծրագրի իրականացմանը գումար չի հատկացվել:*